

## Նամակ՝ Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց Ժողովին

«Վասն զի ուղղափառ հաւատոյ քո լոյս, ո՞վ Եկեղեցի Հայոց, ոչ նուագեցաւ. ի բարի սերմանս ցորենոյդ՝ որում ոչ խառնեցաւ. զաղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց. ի ստուգութեան եւ ի ճշմարտութեան հացն քո կենդանական՝ մեռելական խմոր եւ հերձուած քացախութեան չարութեանն ոչ զանգեցաւ. յոսկի անբիծ հաւատոյն եւ յարձաթ լուսատեսիլ բանին՝ պղինձ ժանգաւոտ եւ կապար սեւաթոյր ոչ գտաւ»:

«Որովհետեւ քու ուղղափառ հաւատքի լոյսը չխամրեցաւ, ո՞վ Հայոց Եկեղեցի, ցորենիդ բարի սերմերուն որում չխառնուեցաւ, օտարոտի ուսմունքներու աղտաղտուկ ջուրը չպղտորեց քու աւանդութեան մաքուր աղբիւրը, քու ճշմարտութեան եւ արդարութեան կենդանի հացին մէջ անկենդան խմոր եւ չարութեան ապականութեան հերձուած չշաղախուեցաւ, քու անբիծ հաւատքի ոսկիին եւ լուսատեսիլ խօսքի արձաթին մէջ ժանգաւոտ պղինձ եւ սեւաթոյր կապար չգտնուեցաւ»

(Յովհաննէս Վրդ. Երզնկացի Պլուզ):

Հայաստանեայց Առաքելական մեր Մայր եւ Ս. Եկեղեցւոյ նկատմամբ այրող սիրոյ հրամայականն է որ զիս կը պարտաւորեցնէ Եպիսկոպոսական Ժողովիդ ներկայացնել առկայ նամակը: Գուցէ ինձի նման շատերու միտքն ու սիրտը, խիղճն ու հոգին կը ճենճերի այն իրավիճակով, որուն դէմ յանդիման կը գտնուի այսօր Հայ Եկեղեցին. ուստի՝ թող այս նամակի սեղմ տողերուն մէջ բարձրացած ըլլայ նաեւ այն բիրաւոր հայորդիներուն ձայնը, որոնք նախանձախնդիր են իրենց պապերու հաւատքին, սրբութիւններուն, աւանդութիւններուն, պատմութեան եւ ինքնութեան գերագոյն արգասիքը հանդիսացող Հայ Եկեղեցւոյ նկատմամբ, եւ միաժամանակ իրաւացիօրէն մտահոգուած են անոր ներկայով եւ ա՛լ աւելի՝ ապագայով:

Ով հայրեր եւ ճշմարտութեան վարդապետներ, Ձեզի՛ վստահուած է մեր միաճնաէջ եւ աստուածակառոյց Հայ Եկեղեցւոյ ղեկավարութիւնը: Հոգեւոր ներշնչումով, հաւատքով եւ ճշմարտութեան տեսիլքով առած Ձեր որոշումները կրնան ոռոգել մեր Եկեղեցւոյ երբեմնի դալար անդաստանը, արգասաւորել անոր կենսատու հողը նոր փթթումներով, երկնել դարագլուխ կազմող շրջադարձ մը ազգային-եկեղեցական զարթօնքի, հանդիսանալ հայութեան ընկերային եւ հասարակական կեանքին մէջ հոգեւոր փարոս մը կողմնորոշումի ու դառնալ սկիզբ բարոյական գիտակցութեան մը բարձր կերտումին:

Արդարեւ, մեր միասնական հայրենիքի՝ Հայաստանի անկախացումէն եւ պետականութեան վերստեղծումէն ետք, Եկեղեցւոյ եւ ընդհանրապէս կրօնական արժէքներուն նկատմամբ յառաջացած ժողովրդային հետաքրքրութեան եւ դրական մօտեցումի հսկայ ալիքը, վերջին քանի մը տարիներու ընթացքին, կը թուի հետըզհետէ գտնուիլ ծանծաղ տեղատուութեան մը մէջ. այս մասին կ'ապացուցանեն անցնող երկու տարիներուն իրարայաջորդ պատահարները եւ հայ մամուլին, նաեւ համացանցային տարատեսակ կայքէջերուն մէջ լոյս տեսած բողոքի եւ ընդվզումի բազմաթիւ յօդուածները, զորս թուարկել տեղին չէ այստեղ: Այնուամենայնիւ, փաստերը մատնացոյց կ'ընեն մեր հանրային եւ եկեղեցական կեանքին մէջ ստեղծուած ջղուտ իրավիճակ մը, բացասական տրամադրուածութեան եւ լարուած մթնոլորտի մը յառաջացումը, այս կացութեան մէջ վատթարագոյնը՝ Եկեղեցւոյ ուրոշ դեկավարներու հանդէպ հաւատացեալներու լայն շրջանակներուն մօտ վրատահութեան մը պաշարին տակաւ առ տակաւ սպառումը:

Դժբախտաբար, կարծէք թէ հայ մարդուն սրտին մէջ կոտորեցաւ բան մը. մինչեւ հիմա խնամքով պահպանուած խորհրդապաշտութիւն մը փշրուեցաւ բախելով բիրտ իրականութեան մը ժայռին: Մեր համեստ դիտարկումով, այս անբարենպաստ կացութեան ստեղծման իսկական դրդապատճառները ոչ թէ հաւատացեալ հայուն ունեցած խնդիրն է իր պաշտած կրօնքին էութեան կամ հաւատացած Մայր Եկեղեցիին հետ, այլ այն գործելաճին, որ իր դրսեւորումներու բռնազբօսիկ երանգներով որդեգրուեցաւ մեր Եկեղեցւոյ բարձրաստիճան դեկավարութեան կողմէ վերջին եւ նորագոյն ժամանակներուն:

Թերեւս ընդհանրապէս Հայ Եկեղեցին կազմակերպելու, գուցէ անոր մէջ նոր կարգ ու կանոն մը ամրագրելու ծրագիրն է եղած պատճառը Եկեղեցւոյ դեկավարութեան որդեգրած այս ընթացքին, բայց պէտք է գիտնալ որ միշտ նպատակը չէ որ կ'արդարացնէ միջոցը: Որքան ալ սուրբ ըլլայ նպատակը, միջոցն ալ պէտք է հիմնուած ըլլայ բարոյական սկզբունքներու, արդարութեան եւ առաւել եւս՝ ճշմարտութեան վրայ:

Մեր արդի հասարակութեան մէջ շատեր կը կարծեն թէ Եկեղեցիին ներկայացուցածը պատրանքի եւ խաբէութեան աշխարհ մըն է: Բայց մենք զարհուրանքով տեսանք նաեւ ամբողջ համակարգերու փլուզումը աշխարհիկ միջավայրին մէջ՝ տնտեսական շուկաներու, մամուլի եւ դրամատիրական հասարակարգի: Դրամատուներու կրանիտեայ թուացող հսկայական համակարգ մը ակնթարթի մը մէջ փճացուց ժողովուրդներու ազգային հարստութիւնը, որ ամբարուած էր սերունդներու անդուլ զոհողութիւններով: Արդեօ՞ք վտանգած չէ ժամանակակից մեր հասարակութիւնը իր ընկերային հասարակարգի բարոյական չափանիշները՝ ինքզինք գահավիժելով դէպի անյատակը կեանքի արժեզրկութեան: Կան նաեւ կեանքի անչափելի արագացումը, հաղորդակցական միջոցներու տարատեսակ եւ նորանոր յայտնագործումները, համացանցերուն տիեզերքը, որոնց անհունին վրայ անգամ կարելի չէ նշմարել հորիզոնը: Ունի՞ մարդկութիւնը պատասխաններ այս մարտահրաւերներուն դիմաց, ո՞ր կը գտնուինք այժմ եւ դէպի ո՞ր կ'երթանք մենք:

Եթէ երբեք մեր Եկեղեցին կորսնցնէ հայ հասարակութիւնը բարոյապէս կերտելու իր ուժականութիւնն ու առաքելութիւնը, ո՞վ կ'ամ ի՞նչը պիտի վերցնէ անոր տեղը. արդեօ՞ք կայ աշխարհիկ կառոյց մը որ փոխարինէ զայն:

Ահաւասիկ, ընկերային հասարակութեան ճգնաժամը կը ներկայացնէ հարցին մէկ երեսը, իսկ Եկեղեցիինը՝ միւսը: Բայց երկուքն ալ սերտօրէն առնչուած են իրարու, եւ ճիշդ հոս է որ Եկեղեցին իր հոգեւոր ընդերքէն, հաւատքի իր բիրեղ ակունքէն կրնայ վերանորոգել ինքզինք, իր յուսադրիչ ներկայութիւնը, նաեւ իր հոգեւոր-բարոյական հեղինակութիւնը անփոխարինելի դարձնել հոն՝ ուր տնտեսական եւ քաղաքական բարօրութիւնը ընկրկած է, խիղճին ձայնը մարդոց սիրտերուն մէջ տկարացած է, հաւատքին թռիչքը խոնարհիլ, սիրոյ հուրը անթեղել եւ յոյսին լոյսը դէպի վաղուան բոցավառ արշալոյսը աղօտիլ սկսած են:

Այսօր, թէկուզ լուրջ եւ մտահոգիչ ճգնաժամի մը մէջ, ընդհակառակը, մեր Մայր եւ Ս. Եկեղեցիին կը ներկայանայ լաւագոյն առիթը՝ կերտելու նոր սկիզբը համազգային եւ եկեղեցական կեանքի դարազուխ կազմող բարոյական վերանորոգումին ու զարթօնքին:

Առ այս, Եկեղեցին իրաւունք չունի թաքնուելու եւ ոչ ալ անոր հոգեւոր սպասաւորները ունին իրաւունք հակուր ձեւանալու կամ վարելու ջայլամի քաղաքականութիւն մը՝ անտեսելով անհերքելի իրականութիւնը: Քաջութիւն է պէտք ըլլալու համար ճշմարտութեան կողմը, բարոյական բարձրութիւն՝ ընդունելու համար նաեւ սեփական թերութիւններն ու տկարութիւնները: Եկեղեցին պէտք է մօտեցնել մարդոց, պէտք է կուռ համոզում դարձնել հայ մարդուն մօտ, որ Եկեղեցին ո՛չ միայն ժողովուրդինն է, այլ, բառին իսկական առումով, ի Քրիստոս կոչուած եւ անոր խորհրդաւոր ներկայութեան առջեւ Եկեղեցի դարձած ժողովուրդն է, եւ թէ իւրաքանչիւր անդամ կը ներկայացնէ անփոխարինելի ու անշփոթելի արժէք մը անոր հաւաքական մարմնին մէջ: Հաւատքը պէտք է աւետարանել ու բացատրել անոր. եւ այդ կարելի է, քանի քրիստոնէական հաւատքը առասպել մը չէ, ան իրական է՝ բանական, ըմբռնելի եւ մատչելի ամէնուն:

### ➤ Վերադարձ դէպի աղբիւրը լոյսին եւ ճշմարտութեան

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի քարոզչական գործունէութիւնը սկսաւ Գալիլէայի մէջ՝ հիմնական պատգամով մը. “Մօտեցած է երկնքի արքայութիւնը”<sup>1</sup>: “Հասած է Աստուծոյ արքայութիւնը”<sup>2</sup>, կամ շատ աւելի ճշգրիտ՝ “Աստուծոյ Արքայութիւնը ահա ձեր ներսիդին, ձեր մէջն է”<sup>3</sup>: Այս պատգամին կը նախադրուի սակայն Տիրաւանդ հզօր կոչ մը, որ միաժամանակ ուղղուած է անհատ մարդուն եւ հաւաքականութեան՝ “Ապաշխարեցէ՛ք”: Արմատական շրջադարձի մը այս հրաւերը, կեանքի բոլոր մակարդակներուն վրայ, վերջին հնարաւորութեան մը նախապայմանն է ըլլալու համար ատակ՝ ընդունելու փրկութեան այն մեծագոյն շնորհը, զոր Աստուած կը պարգեւէ մարդուն:

<sup>1</sup> Մտ. Դ, 17; Ժ, 7:

<sup>2</sup> Մկ. Ա, 15; Ղկ Ժ, 9, 11:

<sup>3</sup> Ղկ. ԺԷ, 20:

Վիժաճ այժմու հոգեւոր-բարոյական ճգնաժամին մէջ արդեօ՞ք ժամանակը չէ կատարել անկեղծ եւ հիմնական վերադարձ մը դէպի քրիստոնէական հաւատքին ակունքը, Ս. Աւետարանի կենարար պատգամը, թարգմանել զայն նախ մեր կեանքին մէջ, ծանօթանալ Յիսուս Քրիստոսի խորհուրդին ու անոր տիեզերական մեծութեան հետ: Բաւարար չէ կարդալ Աւետարանը, ապրի՛լ պէտք է զայն, որպէսզի համոզիչ դառնայ հին կարգախօսը՝ “Եկեղեցականներուն կենցաղը աշխարհականներուն գիրքն է”: Արդարեւ, Եկեղեցւոյ հոգեւոր ղեկավարութեան ներկայի մեծ պատասխանատուութիւնը՝ աւետարանումի ճամբով առաքելական նոր գործունէութեան մը ձեռնարկումն է հայ ժողովուրդի կալուածէն ներս: Դասական հին արժէքներու կորուստին, հոգեւոր-բարոյական գիտակցութեան սնանկացումին, յարաբերական համոզումներու եւ օտարոտի, խայտաբղէտ վարդապետութիւններու դիւթականութենէն այլափոխուող նամանաւանդ հայկազուն մեր նոր սերունդին ծանօթացնել հայաբոյր տոհմիկ արժէքներուն եզակիութիւնը, զանոնք մօտեցրնել Աստուծոյ՝ վկայելով ճշմարտութեան մասին: Ճշմարտութիւնը՝ արարչութեան խորհուրդին, մարդկային գոյութեան, անոր աստուածատուր կոչումին, մեր տաճած յոյսին մասին, որ կը գերազանցէ նիւթականը ու աշխարհին հետ կապուած մեր ֆիզիքական պայմանաւորուածութիւնը:

Ցաւալի է հաստատել, որ առկայ ճգնաժամը նաեւ արդիւնք էր եկեղեցական-հոգեւորական կալուածին մէջ ներթափանցած նիւթապաշտ մտածողութեան: Եկեղեցիի արժէքաբանութեան գնահատանքի նժարին վրայ անբնական փոփոխութիւն մը կատարուեցաւ, սխալ բան մը պարտադրուեցաւ հոն, յառաջ քաշուեցան անոնք՝ որոնք կրցան եկեղեցականի Բանին կենաց քարոզութեան առաքելութիւնը վերածել ժանտ դրամահաւաքի մը: Այս տեսակ գործունէութիւնը շատերու մօտ նկարագրային նստուածք դարձաւ, եղաւ չարաբաստիկ մտայնութիւն՝ ունենալ, փոխարէն՝ ըլլալու:

Այս ընթացքը կարելի չէ շարունակել: Պէտք չէ հայ հասարակութեան լայն խաւերը մղել Եկեղեցիին ու անոր հոգեւոր ղեկավարութեան հանդէպ ճարահատ անտարբերութեան: Ժամանակն է զգաստանալու եւ սթափելու: Ժամանակն է հիմնապէս վերադառնալու դէպի հաւատքին ակունքը, դէպի Ս. Աւետարանը, էապէս վերանորոգուելու, անոր խօսքին ու պատգամին լեցունութեամբը զօրանալու եւ, ի վերջոյ, անոր կենսայորդ երակներէն կարենալ սնուցանելու համար մեր Մայր եւ Ս. Եկեղեցիին սիրասուն զաւակները:

Չկայ աւելի վեհ եւ խորիմաստ բառ մը քան արարչագործութեան անդրանիկ ստեղծագործութիւնը հանդիսացող “Լոյս”-ը: Լոյսը խորհրդանիշն է Քրիստոսի եւ ճշմարտութեան, իսկ Եկեղեցին՝ անոնց աղբիւրը: Այսօր շատ շատեր ծարաւ են այդ լոյսին ու կարօտ՝ ճշմարտութեան: Իբրեւ եկեղեցականներ, հիմա հանգիստ խղճով կրնա՞նք ըսել՝ “զՊաշտօնն իմ փառաւոր առնեմ”, ու բանալ այդ աղբիւրը լոյսին եւ ճշմարտութեան՝ հայ մարդուն, հայ հաւատացեալին, հայ ժողովուրդին առջեւ անխտիր: Մեր Տէրը այդ է որ ըրաւ իր աստուածմարդկային կատարեալ կեանքով ու գործով: Ան այս է որ

կը պահանջէ մեզմէ՝ ըլլալ “մատակարարները” իր աստուածային ճշմարտութենէն բխած հոգեւոր լոյսին: Որքա՛ն պարտ են հետեւիլ իր Անձին օրինակին Քրիստոսի Եկեղեցիին սպասաւոր կարգուած հոգեւորականները, յատկապէս ներկայի այս հոգեւոր-բարոյական ճգնաժամին մէջ:

### ➤ **Հոգեւոր իշխանութիւնը**

Իւրաքանչիւր կազմակերպութեան, հաստատութեան, մեծ երկիրներու, նոյնիսկ պարզունակ ընտանիքի մը հիմքին վրայ իշխանութիւնը անհրաժեշտ է զանոնք ղեկավարելի դարձնելու համար: Աստուածաշունչը, անշուշտ, Եկեղեցիի հոգեւոր ղեկավարներուն կը շնորհէ որոշակի իշխանութիւն՝ հաւատացեալ հօտը առաջնորդելու եւ ոչ թէ անոր տիրապետելու համար: Դժբախտաբար, այս շատ զգայուն հարցը պատմութեան ընթացքին յաճախ չարաշահուած է, եւ այսօր ալ տեղիք կու տայ սխալ մեկնաբանումներու: Վերջին քանի մը տարիներուն, որոշ եկեղեցականներու մօտ մտայնութիւն եւ գործելաճ դարձած է Եկեղեցւոյ հոգեւոր ու վարչական կեանքէն ներս բիրտ ուժին կիրարկումը, կարենալ իրականացնելու համար մեծաւ մասամբ ինքնանպատակ ձեռնարկումներ: Սոյն փաստը ամբողջապէս անհամապատասխան է այն սուրբ վարդապետութեան, զոր Աւետարանին ընդմէջէն մեզի կը պատգամէ մեր քրիստոնէական հաւատքին փրկագործ հիմնադիրը՝ Քրիստոս, եւ կ’աւանդէ ճշմարիտ Եկեղեցին:

Հայ Եկեղեցին ո՛չ պետութիւն է եւ ոչ ալ քաղաքական իմաստով կառավարութիւն մը: Հայ Եկեղեցիին նուիրապետական կառոյցը կարելի չէ նոյնացրնել պետութեան մը դրուածքին հետ, կամ զայն շփոթել զինուորական բանակի մը կազմուածքին հետ՝ գերադասութեան եւ ստորադասութեան, հրամանատար եւ զինուոր յարաբերութեան սկզբունքէն մեկնելով: Զինուորը պէտք է անպայման ենթարկուի հրամանատարի հրամանին, այլապէս ծանրօրէն կրնայ պատժուիլ կամ յռեգոյն պարագաներուն՝ գնդակահարուիլ: Բռտին իսկական առումով, Եկեղեցւոյ նուիրապետութիւնը չի կրնար համեմատուիլ, նոյնիսկ նոյնանալ ընկերային հասարակարգին ու անցեալին մէջ երբեմն հոն իշխող բարքերուն՝ ազատի եւ ստրուկի, ճորտատէրի եւ ճորտի, տիրոջ եւ ծառայի կարգավիճակին հետ: Եկեղեցին մարդկային հասարակութեան մէջ կոչուած է ըլլալու զատ հասարակութիւն մը: Եկեղեցին սո՛ւրբ է, ուստի՝ հին եւ ուղիղ հասկացողութեամբ սրբութեան հիմնական յատկանիշն է իր տեսակին մէջ զատուիլ եւ սրբազան կամ օգտակար նպատակի մը յատկացուիլ: Այս իմաստով ու այս առումով էր նաեւ, որ նախկին քրիստոնէաները “սուրբեր” կը կոչուէին, քանզի Աստուծոյ օրէնքը ընդունելով եւ ի Քրիստոս փրկութեան կոչուած ըլլալով, զատուած էին ժամանակի հասարակական կենցաղավարութենէն ու բարքերէն: Հետեւաբար, Պետրոս առաքեալ իր խօսքն ուղղելով քրիստոնէայ հաւատացեալներուն, կ’ըսէ. “Դուք ընտիր ցեղ էք, թագաւորութիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, Աստուծոյ սեփական ժողովուրդ<sup>4</sup>”: Իսկ Պօղոս առաքեալ, երբ ողջոյն կը յղէ մէկ եկեղեցիի

<sup>4</sup> Ա. Պտր. Բ. 9:

անդամներէն ուրիշ եկեղեցիի մը, կ'ըսէ. “Կ'ողջունեն ձեզ բոլոր սուրբերը”:  
Այս եւ աւետարանական բազմաթիւ այլ վկայութիւններ կու գան հաստատելու այն իրողութիւնը, որ Եկեղեցին իբրեւ ժողովուրդ Աստուծոյ, ընկերային հասարակութեան մէջ նոյնպէս հասարակութիւն մը ըլլալով հանդերձ, ջոկուած է. բայց ան ունի Տէրունաւանդ առաքելութիւն մը՝ ըլլալ թոխմորի նման՝ մարդկային ընկերութեան ամբողջ զանգուածը շաղախելու համար Յարուցեալ Տիրոջ փրկարար ներկայութեան եւ Ս. Աւետարանի լոյսով:

Աստուծմէ Եկեղեցիին շնորհուած, իսկ Եկեղեցիէն նուիրապետութեան վրատահուած հեղինակութիւնը գերազանցապէս սիրոյ ծառայական առաքելութիւն մըն է՝ համաձայն Տիրաւանդ այն պատգամին. “Եթէ մէկը կ'ուզէ առաջինը ըլլալ, ամենքին մէջ վերջինը եւ ամենուն սպասաւորը թող ըլլայ”<sup>5</sup>: Բարոյական այս մօտեցումը շատ աւելի ցայտուն կ'արտայայտուի Ոսկուայի առթիւ, երբ Յիսուս իր աշակերտներուն դիտել կու տայ. “Գիտէ՞ք թէ ինչ ըրի ձեզի... Դուք զիս վարդապետ եւ Տէր կը կոչէք... Եթէ ես՝ Տէրս եւ Վարդապետըս ձեր ոտքերը լուացի, դուք ալ պարտաւոր էք իրարու ոտքերը լուալ, որովհետեւ օրինակ մը տուի ձեզի, որպէսզի ինչ որ ես ձեզի ըրի, դուք ալ այնպէս ընէք”:

Եկեղեցին իր նուիրապետութեան կողմէ աստուածադիր հոգեւոր-բարոյական օրէնքով կը ղեկավարուի, որ նման չէ աշխարհիկ քաղաքական եւ քաղաքացիական օրէնքին. ան կը տարբերի անկէ, որովհետեւ գերազանցապէս կը հիմնուի աստուածային սիրոյ եւ ծառայութեան սկզբունքին վրայ: Մոյն իրողութիւնը լուսագոյնս կ'արտայայտուի Մարկոսի Աւետարանին մէջ վկայուած Յիսուսի աստուածախօս պատգամով. «Գիտէք, որ հեթանոսներու մէջ իշխանաւոր համարուածները կը տիրեն անոնց. եւ անոնց մեծամեծները կ'իշխեն անոնց վրայ. ձեր մէջ ալ այդպէս պէտք չէ ըլլայ... Ձեզմէ ով որ ուզէ առաջին ըլլալ՝ ամենքին ծառայ թող ըլլայ. որովհետեւ մարդու Որդին ալ չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ՝ ծառայելու ...<sup>7</sup>»:

Յաւալի է հաստատել, որ նոյնիսկ Եկեղեցիին մէջ Յիսուսի եղբայրասիրութեան եւ փոխադարձ ծառայասիրութեան վարդապետութենէն ցայսօր շատ բան փոխուած է: Եկեղեցւոյ ղեկավարութեան շարքերուն մէջ տեղակալած է բռնամտութեան հասնելու չափ հեղինակութեան ձգտելու ցանկութիւն: Զգալի դարձած է, որ անոնցմէ շատեր ունին ինքնավատահոութեան մեծ պակաս մը եւ թերեւս ալ կը տառապին “նափուլեռնական բարդոյթ”-ով: Անշուշտ պէտք է գիտնալ, որ մարդիկ հեղինակութիւն չեն ունենար, այլ՝ հեղինակութիւն կ'ըլլան: Ա՛յո, հեղինակութիւն կը դառնան, եթէ իշխանութիւնը հիմքէն՝ ժողովուրդէն դէպի վեր բարձրանայ ու փոխանցուի այն անձին որ ատակ է զայն կրելու: Հեղինակութիւնը պատիւ, բայց միաժամանակ պատաս-

<sup>5</sup> Մտ. Ի, 26:

<sup>6</sup> Յովհ. ԺԳ, 13-14:

<sup>7</sup> Մկ. Ժ, 42-45:

խանատուութիւն եւ պարտք մըն է ամբողջանուէր ծառայութեան. ծառայութիւն՝ Քրիստոսի Եկեղեցիին եւ հաւատացեալ ժողովուրդին: Ընդհակառակը, եթէ իշխանութիւնը վերէն վար, ղեկավարէն ժողովուրդին պարտադրուի, կը վերածուի բռնատիրութեան, ուր վախի մթնոլորտը կը տիրէ, կաշկանդումները կը շատնան եւ լրտեսները կը վիստան:

Ե. դարու Ընդհանրական Եկեղեցոյ մեծագոյն սուրբերէն Ս. Օգոստինոս, խօսքը ուղղելով իր ժողովուրդին, կ'ըսէ. «Ես ձեր եպիսկոպոսն եմ, բայց միայն ձեզ հետ միասին կրնամ քրիստոնէայ ըլլալ»: Եկեղեցոյ նուիրապետութեան բոլոր ներկայացուցիչները անխտիր պէտք է ըլլան Քրիստոսի Եկեղեցիին մէջ ծառայողներու ծառաները եւ ոչ թէ ոյժ, իշխանութիւն, հեղինակութիւն եւ հարստութիւն ունեցողներ:

Եկեղեցին հաւատացեալ ժողովուրդն է, ժողովուրդը՝ Եկեղեցին: Հոգեւոր սպասաւորը ի պաշտօնէ եւ կոչումով Աստուծոյ խօսքը անոր մատակարարողը եւ զայն (իմա՝ ժողովուրդը) ուղղորդողն է: Եկեղեցին ժողովուրդին համար է եւ ոչ թէ ժողովուրդը Եկեղեցիին: Մեր եկեղեցական հոգեւորական ընտանիքին մէջ պէտք չէ այն մտածելակերպը տիրող դառնայ, թէ կղերականներն են Եկեղեցոյ իշխանաւորներն ու տէրերը, իսկ ժողովուրդը կը գտնուի սպասարկողի դերին ու կարգավիճակին մէջ: Սոյն մտածելակերպը շատ վտանգաւոր հայեցակէտ մըն է եւ ամբողջապէս անհամապատասխան է Հայց. Առաք. Եկեղեցոյ ազգային նկարագրին ու ժողովրդավարական հրնաւանդ կանոնին:

### ➤ **Հայց. Առաք. Եկեղեցին եւ իր ժողովրդավարութիւնը**

Հայց. Առաք. Եկեղեցին եկեղեցիներու ընտանիքին մէջ կը գրաւէ առանձնաշատուկ տեղ՝ արեւելեան հոգեւոր ւսանդութիւններու ճոխութեամբ, աստուածաբանական-դաւանաբանական հայեցակէտերու ուրոյն մեկնաբանութեամբ, ինքնանկախութեամբ (աւտօքեֆալ), նաեւ իր վարչական կեանքը կազմակերպելու մէջ նուիրականացած ժողովրդավարութեամբ: Եկեղեցոյ վարչական կեանքին մէջ ժողովուրդին գործօն մասնակցութիւնը, ուրեմն, կը հանդիսանայ Հայ Եկեղեցոյ մեծագոյն ձեռքբերումներէն մէկը: Եւ սոյնը ոչ թէ նորամուտ նորաձեւութիւն մըն է Հայ Եկեղեցիին համար, այլ՝ ամրագրուած ընդոծին ւսանդութիւն մը, որուն սկիզբը պէտք է ընդունիլ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական-պաշտօնական կրօն հոչակումէն ընդամենը 143 տարի վերջ: Այդ բարեբաստիկ 444 տարեթիւր Շահալվանի ժողովի գումարման թուականն է, որ կայացած է Յովսէփ Ա. Հողոցմեցիի կաթողիկոսութեան եւ Վասակ Միւնեցիի մարգպանութեան օրօք: Բարեբախտաբար, մեր մատենագրութիւնը մեզի ւսանդած է այդ ժողովին կանոնները, ինչպէս նաեւ նախաբանը, ուր յստակ կը վկայուի<sup>8</sup>, որ այդ ժողովին

<sup>8</sup> «Եւ ժողովին եպիսկոպոսք Խ եւ երիցունք եւ սարկաւագունք բազում եւ նախանձաւոր պաշտանէայք եւ համարէն ուխտ սրբոյ եկեղեցոյ, իշխանք ամենայն՝ զաւառատեարք, զաւառակալք պէտք, բռնաւորք, զաւրագլուխք, հազարաւորք, կուսակալք, ազատ կողմանց, աւագ նախարարք

մասնակցած են ոչ միայն 40 եպիսկոպոսներ, վանականներ, երեցներ, սարկաւազներ, նախարարներ, նոյնիսկ՝ ազատներ եւ շինականներ, “Որոնք նախանձախնդիր էին օրէնքներու սրբութեան”: Այս պատմական իրողութիւնը, Հայ Եկեղեցոյ ժողովրդավարական դրուածքը հասկնալու իմաստով, կը ներկայացնէ առանձնայատուկ կարեւորութիւն մը, քանի այս փաստը իր շարունակութիւնը ունեցաւ Վարդանանց պատերազմի նախօրեակին, 449 թրւականին, Արտիշատի մէջ հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչներու մասնակցութեամբ գումարուած ժողովով: Հայ Եկեղեցոյ մէջ աւանդութիւն դարձած եւ նուիրականացած այս օրէնքն էր որ, ահաւասիկ, պարագաներու բերումով, ամրագրուեցաւ “Ազգային Սահմանադրութեան” մէջ 1860/63 թրւականներուն:

Ընդհակառակը, Ռուսական Կայսրութեան տարածքին մէջ Հայ Եկեղեցոյ գործունէութեան համար 1836-ին ռուսաց Նիկոլայ Ա. կայսեր կողմէ վաւերացուած եւ որոշ ժամանակաշրջան մը կիրարկուած “Պոլոժէնիէ”-ն, հետեւելով ուղղափառ եկեղեցիներուն օրինակին, աւելի ունէր կդերակեղորոն բընոյթ: Ան Եկեղեցիին իշխանութիւնը կը կեղորոնացնէր կաթողիկոսին, եւ տեղական մակարդակներու վրայ՝ առաջնորդներուն ձեռքին, անշուշտ անոնց վրան ալ պահակ կարգելով “պրոկուրորը” կամ “քոնսիսթորիա”-ներու վարիչները: “Պոլոժէնիէ”-ն թեպէտ չէր մերժէր Եկեղեցոյ վարչական կեանքին մէջ աշխարհականներու մասնակցութիւնը, բայց ռուսաց կայսեր կը վերապահէր առաջնորդներու վերջնական անուանումը, կաթողիկոսին կողմէ ներկայացուած երկու ընտրելիներուն մէջէն: Հայ Եկեղեցոյ ժողովրդավարական նկարագրին եւ անոր սրբազան աւանդութեանց խոտոր այս կացութեան առաջին հարուածը հասցուց Խրիմեան Հայրիկը, երբ 1906-ին յատուկ կոնդակով մը ամբողջապէս ժողովուրդին վերադարձուց իր առաջնորդը ընտրելու իրաւունքը: Ցարական Ռուսաստանի փլուզումէն ետք, Գեորգ Ե. ներկայացած առիթը չփախցուց, եւ 1917-ին ընդհանրապէս ջնջեց “Պոլոժէնիէ”-ի գործածութիւնը Հայ Եկեղեցիին մէջ, քանի որ ան դուրսէն պարտադրուած եւ հայ եկեղեցական-վարչական մարմնոյն մէջ օտարոտի կանոնագրութիւն մըն էր:

Հայաստանի մէջ համայնավարական կարգերու հաստատումէն ետք, անաստուածութեան սկզբունքին եւ քարոզչութեան վրայ հիմնուած Սովետական Միութիւնը հազիւ թէ հանդուրժուած կարգավիճակ մը կը շնորհէր Եկեղեցիին: Մարքսիզմի եւ Լենինիզմի տնտեսական, պետական-քաղաքական ծրագրով զարգացող խորհրդային հասարակութեան մէջ բացարձակապէս տեղ չունէր եկեղեցին, ո՛չ ալ իր հոգեւորականութիւնը: Տեղին չէ այստեղ բանալ առանձին փակագիծ մը յիշելով այն հալածանքները, որոնց ենթարկուեցաւ նաեւ Հայ Եկեղեցին մինչեւ Հայրենական Մեծ Պատերազմին աւարտը: Քանի ժողովուրդը, այսուհետեւ, պաշտօնական կապ մը չունէր իր Եկեղեցիին հետ եւ մասնակից չէր անոր հոգեւոր եւ վարչական կեանքին,

---

աշխարհին Հայոց՝ որք նախանձախնդիր էին արինաց եւ սրբութեան”: Հմմտ. Կանոնագիրք Հայոց, Ա, աշխ. Վազգէն Յակոբեանի, Երևան, 1964, էջ 427-428:



ակամայ խզում մը առաջացաւ հոգեւոր հինաւորց աւանդութեան եւ հաւատացեալներուն միջեւ: Փաստօրէն, ժողովուրդի գործօն մասնակցութիւնը Եկեղեցւոյ վարչական կեանքին մէջ՝ ծխական-համայնքային եւ թեմական դրուածքներով ամբողջապէս անգործունէայ դարձան, չ'ըսելու համար կործանեցան, ուստի՝ այդ ժամանակամիջոցին մէջ հովուապետող կաթողիկոսները ստիպուած եղան Հայաստանի եւ ներքին Սփիւռքի մնացած քանի մը թեմերուն վրայ առաջնորդները (անպայման համաձայնելով Եկեղեցական Գործերու Խորհուրդին հետ) նշանակելու: Ցաւալի է հաստատել, որ խորհրդային կարգերէն ժառանգ մնացած նշանակելու այդ սովորութիւնը դեռ եւս կը շարունակուի Հայաստանի եւ, այսպէս կոչուած, ներքին Սփիւռքի ամբողջ տարածքին:

Եկեղեցւոյ վարչական կեանքը կազմակերպելու պատասխանատուութիւններուն մէջ Հայ ժողովուրդը ոչ միայն կը բերէ իր լայն ու գործօն յանձնառութիւնը, այլ նաեւ Եկեղեցւոյ իշխանութիւնը կը բաժնէ իր եկեղեցական պաշտօնեաներուն հետ՝ ընտրական մասնաւոր իրաւունքով: Համայնքներու եւ ծուխերու մէջ ժողովուրդն է որ կ'ընտրէ ու թեմի առաջնորդ եպիսկոպոսին կը ներկայացնէ իր տիրացուն, զայն քահանայ ձեռնադրելու եւ օծելու խնդրանքով: Նոյնպէս, առաջնորդական թեմի մը թեմական պատգամաւորական ժողովը իր պատրաստած թեկնածուներու եռանուն ցանկէն կ'ընտրէ իր առաջնորդը եւ զայն կը ներկայացնէ կաթողիկոսին՝ ձեռնադրելու, օծելու կամ վաւերացնելու խնդրանքով: Ինչպէս եպիսկոպոսը իրաւունք չունի իր անձնական նախաձեռնութեամբ ընտրելու քահանայ մը եւ զայն պարտադրելու համայնքին, նմանապէս եւ կաթողիկոսին վերապահուած չէ իր անձնական նախաձեռնութեամբ ընտրել եպիսկոպոս մը եւ զայն առաջնորդ նշանակել թեմին վրայ: Սոյնը կոպիտ ոտնձգութիւն մը նկատուած է Հայ Եկեղեցւոյ ժողովրդավարական կարգին դէմ: Բայց, բնականաբար, ինչպէս եպիսկոպոսը քահանայի, նոյնպէս եւ կաթողիկոսը եպիսկոպոսի պարագային իրաւունք ունին չձեռնադրելու եւ չօծելու, երբ ցոյց կու տան ընծայեալին կանոնական, հոգեւոր կոչումի եւ պատրաստուածութեան վերաբերող թերութիւնները:

Ի տարբերութիւն որոշ քոյր եկեղեցիներու, Ամենայն Հայոց Կաթողիկոսը կ'ընտրուի ոչ թէ կարտինալներու կամ միայն եպիսկոպոսաց ժողովին կողմէ, այլ՝ ազգային-եկեղեցական սրբագումար ժողովէն, որուն մէջ ճնշող մեծամասնութիւն կը ներկայացնեն աշխարհական պատգամաւորները:

Այս բոլորը, ահաւասիկ, ցոյց կու տան Հայ Եկեղեցիի հոգեւոր եւ վարչական իշխանութեանց ներդաշնակ բաշխումը եկեղեցականներուն եւ հաւատացեալ ժողովուրդին միջեւ, փոխադարձ պայմանաւորուածութիւնը եւ դարերու ընդմեջէն կառուցողական համագործակցութիւնը՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն մեր Մայր եւ Ս. Եկեղեցիին:

Դժբախտաբար, սակայն, վերջին ժամանակներուն եկեղեցական որոշ ղեկավարներու մօտ ի յայտ եկած աւելի իշխանութիւն ունենալու մենաստիրական

ձգտումները, Հայ Եկեղեցույ ժողովրդավարական իրաւունքին դէմ կատարած ոտնձգութիւնները որոշակիօրէն խախտեցին այն նժարն ու հաւասարակշիռը, որ երբեմն խնամքով եւ երկիւղածութեամբ կը պահպանուէր մեր Եկեղեցույ վարչական կալուածին մէջ: Այս մասին կը խօսին Ֆրանսայի, Զուիցերիոյ եւ այլ թեմերու ու համայնքներու մէջ կատարուած տիրահոշակ իրադարձութիւնները: 2009-ին Մայր Աթոռի կողմէ պատրաստուած եւ խնդրայարոյց պայմաններու մէջ վաւերացուած թեմական ուղենիշային կանոնադրութիւնը, որքան ալ անհրաժեշտ նկատուի նման փաստաթուղթի մը մշակումը, իր որդեգրած կարգ մը յօդուածներով կը ներկայացնէ ուղղակի ոտնձգութիւն մը Հայ Եկեղեցույ ժողովրդավարական սկզբունքին, թեմերու եւ անոնց մէջ օրինաւորապէս գործող պատկան մարմիններու ինքնուրոյնութեան, ինչպէս նաեւ առաջնորդի ազատ ընտրութեան իրաւունքին դէմ: Սոյն թուականի Մայիսին, Ամերիկայի Արեւելեան Թեմի տարեկան ժողովին, թեմական ծրագիր-կանոնագրին մէջ որդեգրուեցաւ մտցնել իր արտաքին երեւոյթին մէջ շատ պարզ թուացող փոփոխութիւն մը, առ այն՝ որ առաջնորդի ընտրութեան համար թեկնածուներուն եռանուն ցանկը պէտք է նախապէս վաւերացուի կաթողիկոսին կողմէ: Սոյնը կը նշանակէ, որ կաթողիկոսը ինքզինքին կը վերապահէ իրաւունքը ներկայացուած ցանկը ընդհանրապէս չվաւերացնել կամ, ըստ իր հայեցողութեան, ցանկէն դուրս հանել թեմին կողմէ առաջարկուած սա կամ նա թեկնածուին անունը: Այլապէս, ինք կ'առաջարկէ իր նախընտրած թեկնածուն առաջնորդի ընտրութեան համար: Հասկնալի է, թէ նման որոշում մը ի՞նչ ազդեցութեամբ եւ ի՞նչ պայմաններու տակ առնուած է: Հայ Եկեղեցույ կանոնական աւանդութիւնը չունի այդպիսի ստացուածք. այդ Լատին Եկեղեցույ կղերական-պապական դրուածքին նմանող մէկ գործառոյթն է, զոր կը միտին իւրացնել եւ սկզբունքով ազատ մեր ընտրական համակարգին պարտադրել Եկեղեցույ իշխանատենչ ղեկավարներէն ոմանք: Այսօր Հայ Եկեղեցիին մէջ աճող ամենամեծ փորձութիւնն ու վտանգը ժողովրդավարութեան սահմանափակումը եւ փոխարէնը Եկեղեցույ սպասաւորներու (իմա՝ կղերի) իշխանութեան յաւելումն է: Ի հարկէ, ամբողջական համոզումով եւ բարձր գիտակցութեամբ պէտք է ողջունել Հայ Եկեղեցույ կառուցուածքը եւ ներեկեղեցական յարաբերութիւնները կանոնակարգելու բոլոր բարի ցանկութիւններն ու այդ ուղղութեամբ գործադրուած ճիգերը, սակայն առանց կղերատիրական նկրտումներու: Հայ ժողովրդական խաւերու լայն մասնակցութիւնը եկեղեցական կեանքի եւ վարչական իշխանութեան կառավարման դրուածքին մէջ կը հանդիսանայ Հայ Եկեղեցույ ստեղծագործած անզուգական ու իր պատմական հնութեամբ եզակի արժէքներէն մէկը: Արդարեւ, նուիրական արգասիք մը, նման այն բիրեղ աղամանդին, որուն վրայ յառաջացած աննշան բիծն անգամ կը նուազեցնէ իր բուն արժէքը:

Այս առնչութեամբ որքան ցանկալի պիտի ըլլար, եթէ երբեք ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը, որ ի պաշտօնէ ունի Հայց. Առաք. Եկեղեցույ գերագոյն եւ օրէնսդիր հեղինակութիւնը, ոչ թէ կաթողիկոսի մը վախճանումէն ետք լոկ նոր գահակալ մը ընտրելու համար հրաւիրուի, այլ՝ առնուազն

չորս տարին անգամ մը գումարուի, այսօրուան ու վաղուան հասարակական, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքի հզօր մարտահրաւերներուն եւ ժամանակի հրամայականներուն դէմ յանդիման գտնուող մեր Ս. Եկեղեցին կայուն եւ կենսունակ պահելու համար: Միայն ազգային-եկեղեցական ժողովին վերապահուած է գերագոյն իրաւունքը ընդհանուր Հայ Եկեղեցիին վերաբերող եկեղեցական որեւէ կանոնագրութիւն կամ օրէնք գործադրուելէ առաջ վաւերացնել եւ տալ շահագործման՝ համայն Հայ Եկեղեցոյ պէտքերուն համար:

Նոյնպէս, Հայց. Առաք. Եկեղեցոյ եպիսկոպոսական ժողովը, որ վերջին անգամ 44 տարի առաջ՝ 1969-ին գումարուած էր, ըլլայ Հայ Եկեղեցիին մէջ գործող հեղինակաւոր եւ մնայուն մարմին մը էապէս եւ բազմակողմանի իմաստով փոխուող հասարակարգի մը մէջ, հայ հաւատացեալ մարդուն համար Եկեղեցին դարձնէ հետաքրքրական, ոչ պարզապէս լոկ իր ծիսակատարութիւններով, այլ՝ ծառայասիրութեամբ եւ անվերապահ մասնակցութեամբ դէպի ժամանակակից ընկերութեան եւ հասարակարգի բոլոր ոլորտները:

### ➤ Եկեղեցի եւ պետութիւն

Հայաստանի մէջ Եկեղեցիի եւ պետութեան սերտաճումը, որ յատկապէս անցնող այս քանի մը տարիներուն շատ աւելի ակներեւ դարձաւ, ստեղծեց մտահոգիչ նոր իրավիճակ մը շատերուն համար: Մտահոգութիւն՝ ոչ միայն այն փաստին համար որ, այսպէս, Հայց. Առաք. Եկեղեցիին կը շնորհուէր առանձնայատուկ հեղինակութիւն եւ յաւելեալ արտօնութիւններ ընկերային-հասարակական կեանքին մէջ, այլ՝ Եկեղեցին կամայ թէ ակամայ կ'ենթարկուէր եւ կը շահագործուէր նաեւ պետական քաղաքական ծրագիրներու իրագործման նպատակներով: Այսօր ալ շատեր կը մեկնաբանեն, թէ այս ընթացքով Եկեղեցին կը շեղի իր հոգեւոր-բարոյական, ընկերային-հասարակական ծառայութեանց կրօնաշունչ առաքելութենէն, դառնալով սպասաւորը այն կուսակցութեան, որմէ կազմուած է ներկայի պետութիւնը: Բնականաբար, պետութեան ծառայելը ազգային սեպուհ պարտքն է իւրաքանչիւր քաղաքացիի եւ, այս իմաստով, Եկեղեցին ալ պիտի սատարէ պետութեան կայացման եւ ամրապնդման գործին: Այսուհանդերձ, ան պէտք չէ կորսնցնել իր բուն դերը, քրիստոսահիմն, հետեւաբար՝ աստուածային հաստատութիւն մը ըլլալու նկարագիրը, եւ պահէ պետական-քաղաքական դրուածքէն ալ վեր հոգեւոր-բարոյական ներկայութիւն մը հանդիսանալու իր հանգամանքը, ոչ միայն պետական կառոյցին, այլ՝ անխտիր ամէնուն համար:

Եկեղեցիին բարձրաստիճան ղեկավարութիւնը պէտք չէ հաւատացեալներուն մօտ ստեղծէ այն թիւր տպաւորութիւնը, թէ Եկեղեցին պետութեան հետ իր համագործակցութեամբ դարձած է պետական կառոյցի կցորդ եւ լծակ, կամ վատթարագոյնը՝ պետական ծրագիրներուն կարգախօսը: Կրկին տեղին չէ այստեղ թուարկել փաստեր, որոնք մօտաւոր անցեալին ուղղակի այն տպաւորութիւնը թողուցին հայ հասարակութեան լայն շրջանակներուն մէջ,

թէ Հայաստանեայց Եկեղեցին եղած է յենակ մը ի նպաստ պետական կուսակցութեան շահերուն:

Հայց. Առաք. Եկեղեցին ազգային-ժողովրդական եկեղեցի է, որուն սուրբ աւագանէն ծնած զաւակները ի՛նչ ուղղութեան, ընկերային-հասարակական կեանքի, նաեւ քաղաքական համոզումներու ո՛ր հոսանքին ալ պատկանին, միեւնոյնն է, անոնք բոլորը Հայ Եկեղեցւոյ մարմնին անդամ են, որոնց Եկեղեցին իբրեւ գործվագութիւն մայր պարտի սիրով առաջնորդել իր գոգը:

Հակառակ իր ազգային-ժողովրդական եկեղեցի ըլլալու հանգամանքին, Հայաստանի մէջ Հայ Եկեղեցին պետական եկեղեցի չէ: Հայաստանի Սահմանադրութիւնն ալ արդէն պետութիւն եւ եկեղեցի անջատ սկզբունքը որդեգրած է, ընդունելով ու գնահատելով հանդերձ Հայց. Առաք. Եկեղեցւոյ “Ազգային բացառիկ առաքելութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում, նրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում”: Այսուհանդերձ, թէ՛ հայրենի պետութեան եւ թէ՛ Հայ Եկեղեցիին համար բարի է որ իրարմէ անջատ մնան, բայց փոխադարձ պատկառանքով եւ խաղաղարար ոգիով մին սատարէ քաղաքացիներու բարօր կեանքին, իսկ միւսը նպաստէ անոնց հոգեւոր-բարոյական վերելքին: Եկեղեցին պէտք չէ ինքզինքին թոյլ տայ, իր հոգեւոր պատասխանատուութիւններէն դուրս, պետութեանն օգտուիլ մասնաւոր իրաւունքներու ստացումով, իսկ պետութիւնն ալ զգոյշ պէտք է ըլլայ չօգտագործել հասարակութեան մէջ Եկեղեցիին ունեցած առաւելութիւնները իր ներքին եւ արտաքին քաղաքական ծրագիրներուն համար:

Անձկայրեաց պիտի ուզենք ակնկալել, որ մեր հայրենի պետութիւնը ըլլայ այնքան հեռատես եւ լուսամիտ, որ գիտնայ հաշտեցնել հայրենասիրութեան ոգին կրօնի ոգիին հետ: Որովհետեւ հաշտարար այս ոգին է, որ ազգը կը միացնէ Աստուծոյ՝ լուսեղէն գոյգ թելերով գիտութեան եւ հաւատքին:

### ➤ **Ոճիր՝ հոգիին դէմ**

Կայ նաեւ ուրիշ ցաւոտ հարց մը, կոտտացող վերք մը, որ Եկեղեցւոյ մարմնին վրայ պիտի չսպիանայ, այլ՝ միշտ պիտի արիւնի, մինչեւ չբարեփոխուի անբնական երեւոյթը եւ արդարութեան վերականգնումով չսրբագրուի կոպիտ սխալը. այդ՝ քանի մը տասնեակ հոգեւորականներու “կարգալուծման” պարագան է:

Վերը ակնարկուած եկեղեցական ճգնաժամին անդրադառնալով պէտք է խոստովանիլ, որ անոր յառաջացման մէջ նաեւ կարեւոր դեր ունեցան իրարայջորդ “կարգալուծում”-ները քանի մը տասնեակ հոգեւորականներու՝ սարկաւազներու, քահանաներու, աբեղաներու, վարդապետներու, եպիսկոպոսներու եւ արքեպիսկոպոսներու: Այս բոլոր “կարգալուծում”-ներուն առթիւ նման լուրջ վճիռ մը կայացնելու համար ծանրակշիռ ոչ մէկ պատճառ գոյութիւն ունէր: Մայր Աթոռի հրապարակած հաղորդագրութիւններուն մէջ

նշուած կցկտուր մեղադրանքները նախ ապացուցուած եւ համոզիչ չեն, ապա անոնք բոլորն ալ մատնացոյց կ'ընեն որոշ կարգապահական խախտումներ, որոնք բոլորն ալ հիմք չեն ներկայացներ ենթակաները “կարգալուծման” ծանր պատիժին ենթարկելու: Այս ուղղութեամբ հայ հասարակութիւնը, որ սկիզբը այնքան ալ ուշադիր չէր Եկեղեցիին մէջ կատարուող ողբերգութիւններուն, սկսաւ հետզհետէ ընդվզիլ, քանի որ նախ երեւոյթը տգեղ էր ու անբնական, եւ երկրորդ՝ տրամաբանական չէր որ այսքան մեծ թիւ մը զոհերու սխալ ըլլային, իսկ զանոնք զոհող անձը՝ շիտակ:

Կարգալոյծ մէկ հոգեւորականն անգամ արդէն շատ է Եկեղեցիին համար. ա՛յս է մեր համոզումը: Կարգալուծումը ոճիր մըն է քահանայական կոչումին, հոգիին ու խղճին, նաեւ մարդկային արժանապատուութեան դէմ: Ի՛նչ պաշտօնի կամ ո՛վ ուզէ ըլլայ, մարդ արարածը իշխանութիւն չունի ձեռնադրութեան եւ Ս. Միւռնի օծման արարողութիւններուն ընդմէջէն քահանային Ս. Հոգիի ուղղակի փոխանցած վաւերական շնորհներէն զրկելու: Քահանայի կոչման, ձեռնադրութեան եւ օծման արարողութիւնները նուիրական են. անոնք կը ներկայացնեն Ս. Հոգիին ազդեցութեամբ ձեռնադրուող անձին անիմանալի եւ էական փոխարկութիւնը, այլ խօսքով՝ հոգեփոխութիւնն ու ներքին վերածնունդը: Իրագործուածը սրբագործութիւն մըն է, անիմանալի խորհուրդի մը կատարումը, բառին իսկական առումով, որ ունի անլուծանելի եւ անկրկնելի նկարագիր: Ուստի, վաւերականօրէն օծուած քահանան “կարգալոյծ” հոչակելը ի՛նչ տեսակ “տնօրինում”-ով ալ իրականանայ, կը յարաբերականացնէ խորհուրդին նուիրականութիւնը, կ'արժեզրկէ անոր անձեռնմխելի սրբութիւնը ու կը գործէ աններելի մեղք մը՝ հայհոյելով Ս. Հոգիին դէմ: Հաւատք պէտք է ունենալ սրբութիւններու նկատմամբ եւ երկիրդ՝ աստուածախօս պատգամին հանդէպ, որ կ'ըսէ. “Ամէն մեղք եւ հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւնը պիտի չներուի ո՛չ այս աշխարհիս մէջ եւ ո՛չ ալ հանդերձեալին”:

Կարգալոյծ հոչակել բազմաթիւ հոգեւորականներ, Եկեղեցոյ առաքելականութենէն զրկել ամբողջ համայնքներ, անվաւեր համարել թեմական եւ համայնքային կանոնագիրներու հետեւողութեամբ ընտրուած վարչութիւններ, ապօրէն յայտարարել գործող կառոյցներ եւ մասամբ նորին, աննախադէպ եւ անընդունելի երեւոյթներ են, նաեւ միանգամայն անհամապատասխան՝ քրիստոնէական կրօնի եւ Եկեղեցոյ առաքելութեան սիրոյ եւ խաղաղարար ոգիին հետ:

Վաւերականօրէն օծուած հոգեւորականը “կարգալոյծ” հոչակել ուղղակի բարբարոսութիւն եւ նողկալի վայրագութիւն մըն է: Ան սնանկութիւնն է բարոյական գիտակցութեան եւ պարտութիւնը մարդկային բանականութեան, որ կը մերժէ օգտագործել դժուարութիւններուն առջեւ երկխօսութիւն ստեղծելու եւ բարի լուծումներ առաջարկելու քաղաքակիրթ բոլոր հնարաւորութիւնները:

---

<sup>9</sup> Մտ. ԺԲ, 31-33:

Այո՛, “կարգալոյծ” հոչակուեցան բազմաթիւ հոգեւորականներ, բայց անոնք չէղան “կարգալոյծ”, այլ եղան աւելի՛ հոգեւորական՝ իրենց կոչումին գիտակցութեան, ծառայական անմնացորդ նուիրումին եւ զօրեղ հաւատքին մէջ: Անոնք ակամայ “արտաքսուեցան” Եկեղեցիէն, հայրենագուրկ դարձան իրենց հոգեւոր հայրենիքէն, բայց Եկեղեցին չարտաքսուեցաւ իրենց սրտէն, ու այդ հոգեւոր հայրենիքը աւելի՛ ծաղկեցաւ, ճոխացաւ ու գեղեցկացաւ իրենց պատարագուած հոգիին մէջ:

Բենետիկտոս ԺԶ., 21 Յունուար 2009-ին, քահանայապետական պաշտօնական կոնդակով չորս եպիսկոպոսներու վրայէն վերցուց Եկեղեցւոյ հաղորդութենէն զրկուած ըլլալու վճիռը, առաջքը առնելով այն մեծ հերձուածին, որ 70-ական թուականներուն ստեղծուած էր Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ, Մարսէլ Լըֆելը արքեպիսկոպոսով: Պիոս Եղբայրութեան պատկանող այս եպիսկոպոսներուն դէմ վերոյիշեալ վճիռը տրուած էր Յովհաննէս Պօղոս Բ.-ին կողմէ 1988-ին, հիմք ընդունելով այն փաստը, որ անոնց եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կը կատարուէր առանց պապական արտօնութեան եւ հակառակ Վատիկանէն եղած կանխագոյշացումներուն: Պիոս Եղբայրութիւնը այդ ժամանակ ունէր 600.000 հաւատացեալ անդամներ, 500 քահանաներ, 200 ճեմարանականներ, եւ կը տնօրինէր 86 դպրոցներ եւ երկու համալսարաններ: Հակառակ այս պատկառելի տուեալներուն եւ Կաթողիկէ Եկեղեցւոյ շարքերէն եղած բողոքներուն, Բենետիկտոս ԺԶ. իր հայրական կեցուածքով, իմաստութեամբ եւ բացառիկ հեռատեսութեամբ, ի նպաստ Կաթողիկէ Եկեղեցւոյ ամբողջականութեան եւ միութեան պահպանման, հնարաւորութիւն տուաւ այդ եպիսկոպոսներուն եւ ուրիշ շատ մը *ինտեգրիստներու* վերադառնալու Մայր Եկեղեցւոյ գիրկը: Բայց այսպիսի մեծ նախաձեռնութիւն մը գործը կրնայ ըլլալ միայն մեծագործներու:

Վստահաբար “կարգալոյծ” հոչակուած հոգեւորականներուն մեծ մասը, “Եկեղեցւոյ առաքելականութենէն” զրկուած համայնքներն ու բոլոր հաւատացեալները, որոնք հայոց լոյս հաւատքը ժառանգած են իրենց նախահայրերէն ու պապերէն եւ ոչ թէ ոեւէ մէկուն քմահաճութենէն, կը սպասեն հաշտութեան, կը յուսան արդարութեան կատարման ու հոգեբուխ կ’աղօթեն խաղաղասիրութեամբ, անյիշաչարութեամբ եւ արժանապատուութեամբ վերադառնալու համար իրենց Մայր եւ Ս. Եկեղեցիին գիրկը:

Կը հաւատամ առ Աստուած յոյսով ըլլալ եւ աղօթել, որ Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ եպիսկոպոսական այս ժողովը պարզապէս չի ծառայէր ամբարձրելու սա կամ նա բարձրաստիճան հոգեւորականին դիրքը կամ շատցնելու անոր ոսկեգօծ գահին փայլքը, այլ՝ իսկապէս կը հանդիսանայ նոր արեւելում մը, վերատեսութեան ենթարկելու մեր աշխարհահայեացքը ի խնդիր հոգեւոր վերածնութեան, որով այսօրուան անկարելին վաղը կը դառնայ կարելի, աներեւակայելի՛ն՝ երեւակայելի, իսկ անհաւատալի՛ն՝ ստոյգ իրականութիւն:

Ես խորապէս համոզուած եմ ու կը հաւատամ, որ Հայց. Առաք. Ս. Եկեղեցին իր էութեան մէջ, դարերուն ընդմէջէն ցայսօր, մնացած է բիւրեղ ու մեծաւ մասամբ անփոփոխ՝ իր առաքելական ուղղափառ հաւատքով, սրբազան աւանդութիւններու ժառանգութեամբ, ծիսական-պաշտամունքային կեանքի հոգեւոր անհամեմատելի գեղեցկութիւններով ու եզակիութեամբ, նաեւ իր հայկազուն հօտին ծառայելու ամբողջանուէր յանձնառութեամբ: Անոր համար է որ առկայ նամակին յառաջաբան ընտրեցի Յովհաննէս Երզնկացի Պլուզ վարդապետի Ս. Գրիգոր Լուսաւորչին ձօնուած ներբողի համապատասխան խօսքերը:

Երզնկացիին նման, բայց ժամանակով շատ աւելի նոր, եկեղեցական ուրիշ հեղինակ մը, որուն անձը եւ գործը ի տղայի տիոց սիրած եմ, Գարեգին Եպս. Սըրբուանձտեանցն է: Ան եւս Հայ Եկեղեցիին մասին նոյնքան գեղեցիկ եւ ճշմարտացի գնահատականով մը արտայայտուած է, որուն խօսքերը փոխարինաբար այս նամակին մէջ պիտի ուզեմ մէջբերել, արտայայտելու համար սրտիս զգացումները.

«Եկեղեցին է հայրենիք մեր, ի նմա գտանեմք զլեզուն եւ քարտէզս եւ ի քարինս նորա դրոշմեալ անուանք, ժամանակք, անցք, յիշատակք անձանց բարեպաշտից եւ հայրենաշինից, անդ արքայք եւ բամբիշք, նախարարք եւ դըշխոյք, տեարք եւ տիկնայք, հայրապետք եւ վարդապետք, քահանայք եւ կղերիկոսք եւ ամենայն արք անուանիք»:

Յաջողութեան եւ արեւշատութեան սրտաբուխ մաղթանօք,  
Մատչիմ Աստուածահիմն Տաճարին եւ Սօրն Լուսոյ Սրբոյ Էջմիածնի ի համբոյր՝

Ժընեւ, 22 Սեպտեմբեր 2013

Դոկտ. Արել Քինյ. Մանուկեան